

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆՈԹԵՐԻՑ

ԱՍՄԱՐՅԱՆ Հ. Ա.

Հայագիտության երախտավոր Ղևոնդ (Քերովբե) Ալիշանը (1820-1901 թթ.) ծնվել է Կոստանդնուպոլսում, դրամագետ-հնահավաք Պետրոս Ալիշանյանի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Պոլսում: 12 տարեկանում՝ 1832-ին նրան ուղարկում են Վենետիկի Սուրբ Ղազար կղզին (իր եղբոր՝ Սերովբեի և ուրիշ «բազմաթիվ ընկերներու» հետ միասին, որոնց ուսուցիչն էր նշանավոր հայագետ Մկրտիչ Ավգերյանը): Ալիշանը չորս տարի շարունակ ուսանում է վանքի դպրոցում՝ «Ընծայարանում», այնուհետև փոխադրվում է այնտեղի «Բարձրագույն կրթարանը», որտեղից և սկսվում է նրա գրական ու գիտական գործունեությունը: Նա վերցրել է Ավարայրի (451 թ. մայիսի 26)՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական ճակատամարտի պատմիչի՝ Ղևոնդի անունը, որն էլ նրան ուղեկցեց ամբողջ կյանքում:

1838-ից Ղևոնդ Ալիշանը Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր: Աշխատել է Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Ռափայելյան վարժարանում (1866-1872)՝ որպես ուսուցիչ: 1849-1851 թթ. խմբագրել է «Բազմավեպ» հանդեսը, 1859-1861 թթ. Փարիզի Մուրադյան վարժարանում աշխատել է որպես տեսուչ:

Ղևոնդ Ալիշանը գրեթե իր ամբողջ կյանքը անցկացրեց Մխիթարյան միաբանությունում, դառնալով հայագիտության մշակներից մեկը: Նշենք, որ այստեղ են աշխատել նաև նշանավոր հայագետներ Ռափայել Թրյանցը, Գաբրիել Այվազովսկին, Մկրտիչ Ավգերյանը, Արսեն Բագրատունին և ուրիշներ: Այստեղ էլ տպագրվեցին Ղ. Ալիշանի հայագիտական արժեքավոր աշխատությունները՝ «Տեղագիր հայոց մեծաց» (1855), «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893), «Հայ-Վենետ» (1896) և ուրիշ գործեր, որոնք փառք ու պատիվ բերեցին նրան:

Ղևոնդ Ալիշանի հայագիտական վաստակը ժամանակին բարձր են գնահատել Միքայել Նալբանդյանը, Գրիգոր Արծրունին, Ռափայել Պատկանյանը, Մկրտիչ Պեշիկաշյանը, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Արշակ Զոպանյանը, Ավետիս Ահարոնյանը և ուրիշներ: Նա ճանաչվել և գնահատվել է նաև օտարների կողմից: Ղևոնդ Ալիշանին շնորհվել են Ֆրանսիական ակադեմիայի Պատվավոր լեգեոնի դափնեկրի, Ենայի (Գերմանիա) Փիլիսոփայության ակադեմիայի պատվավոր դոկտորի, Բուալիայի և Ռուսաստանի ակադեմիաների պատվավոր դոկտորի տիտղոսներ:

Հայագիտության համար խիստ արժեքավոր են Ղևոնդ Ալիշանի ճամփորդական նոթերը, հատկապես այն իմաստով, որ նա ո՛չ միայն սովորական ճանապարհորդ էր, այլ հմուտ մասնագետ՝ պատմաբան, աշխարհագրագետ, հնագետ, ազգագրագետ և այդ ընթացքում բավականին հետազոտություններ է կատարել, որոնք աղբյուրագիտական հենք են ծառայել իր աշխատությունների համար: Դրանք հայագիտական մնայուն արժեքներ են:

Այս հիմնահարցի մասին ալիշանագիտության բնագավառում ընդհանրապես քիչ է գրվել: Ուսանելի է Ղևոնդ Ալիշանի կյանքի այս դրվագը, երբ նա հայագիտական ուսումնասիրություններ գրելուց առաջ, նյութեր հավաքելու նպատակով սկսեց իր ուղևորությունը հիմնականում եվրոպական երկրներում, որոնց քաղաքակրթության հետ շփումներից շատ բան իմացավ մեծ մտածողն ու հայագետը և աշխատեց դասեր քաղել հայ ժողովրդի համար:

Ղ. Ալիշանի ճամփորդական նոթերն ունեն գիտական բացառիկ արժեք. թեպետ նա Հայաստանում ընդհանրապես չի եղել, բայց նրա աշխատությունները հանգամանալից տեղեկություններ են պարունակում հայկական տարբեր շրջանների մասին: Միաժամանակ, շփվելով իտալացիների և այլ ազգերի պատմության ու մշակույթի արժեքներին՝ նա ճիշտ է գնահատել դրանք: Ալիշանի մտքերը շատ իմաստալից են և ուսանելի:

Ղևոնդ Ալիշանի ճանապարհորդությունը կարճ ժամանակաշրջան է ընդգրկել (1850-1853), բայց եղել է բովանդակալից և արդյունավետ: Ճանապարհորդությունների ժամանակ ի՞նչ հարցեր էին հետաքրքրում Ալիշանին, և ինչով էր նա զբաղված: Վենետիկից նա անցավ Իտալիայի մյուս քաղաքները (Հռոմ, Վատիկան, Անկոնա, Մանտուա, Ջենովա և այլուր), եղավ Լոնդոնում, Վիեննայում, Փարիզում, Կանտում, Բյուսելում, Բեռլինում, Ժնևում և այլն: Ճանապարհորդելով աշխարհի տարբեր երկրներում՝ Ալիշանը մի նպատակ էր հետապնդում, հայագիտական անհրաժեշտ նյութեր հավաքել տարբեր մատենադարաններում և գրադարաններում պահվող ձեռագրերից, հիշատակարաններից, լատիներեն գրչագրերից: Գիտնականը ուսումնասիրում էր նաև այդ երկրների ճարտարապետական հուշարձանները և կոթողները, հնությունները, դրամները, ընդհանրապես հնագիտությունը և ազգագրությունը, որոնք նոր նյութեր տվեցին իր աշխատությունները՝ «Միսուանը», «Այրարատը» և մյուսները գրելու համար: Օտար գրադարաններում ուսումնասիրում էր և հայտնաբերում նոր ձեռագրեր, հիշատակարաններ, ճաշոցներ, պրպտում-գտնում հայոց ազգի պատմության, ճարտարապետության, աշխարհագրության, հնագիտության, դրամագիտության և այլ բնագավառների վերաբերյալ նյութեր: Նրան հետաքրքրում էին հայկազուն սրբերը և նրանց կյանքը (սուրբ Սեմեովն, սուրբ Ներսես Լամբրոնացի), Ս. Գրիգոր Հայկազնի տաճարում հայտնաբերում է սուրբ Մակարա նշխարները և այլն: Ալիշանի հայագիտական ուսումնասիրություններն ու հոդվածները մեծ մասամբ տպագրվում են «Բազմավեպ» հանդեսում:

Ճանապարհորդության ընթացքում Ղ. Ալիշանը, խանդավառված իտալական մշակութային արժեքներով, թարգմանել է անգլիացի նշանավոր բանաստեղծ Ջորջ Բայրոնի «Պանդիստուխին Հարուդայ ասպետի» 4-րդ երգը՝ «Իտալիա» խորագրով, որը համահունչ էր հայկական իրականությանը:

Ո՛հ, Իտալի Իտալի, ճաճանչ դարուց անցելոց,

Ճառագայթ է ի հոգիս ուշով ի քեզն յառելոց,

Ի Պունիկեան Գոռոզեն որ խուն մ՝ եւ զքեզ նըւաճէր՝

Մինչ ի յետին լուսապսակ վարչաց քոյոց ու իմաստնոց¹:

1850 թ. սեպտեմբերի 1-ին սկսվում է Ալիշանի ուղևորությունը Վենետիկից դեպի Հռոմ: Իր ուսուցիչ Գևորգ Հյուրմուզը Ղևոնդ Ալիշանին իր հետ վերցնում է ուխտագնացության: Ուղևորության ընթացքում նա կանգ է առնում Իտալիայի Անկոնա քաղաքում, որտեղ կառուցվել էր Սուրբ Կիրակոս հայոց եկեղեցին (այստեղ էին պահվում սուրբ Լիբերիոս Հայկազունի նշխարները և այստեղ էր գտնվում Հռիփսիմյանց միանձնուհիների մենաստանը)²: Այս ամենը դառնում էր գիտնականի ուսումնասիրության առարկան:

Ալիշանը 1850 թ. սեպտեմբերի 9-ին արդեն Հռոմում էր: Նախքան մայրաքաղաք մտնելը, երկու մղոն հեռավորությունից, նրա աչքին ուրվագծվում է մայրաքաղաքի նշանավոր կառույցների մեկի՝ Ս. Պետրոսի եկեղեցու ոսկեգոծ գմբեթը: Հուզված բանաստեղծի երևակայության մեջ այդ պահին արթնանում է «պատմական հեթանոս և քրիստոնեայ մեծ քաղաքը»: Հիշարժան է, որ դրանից հետո նրան բախտ է վիճակվում պատարագելու Ս. Պետրոսի եկեղեցում՝ սուրբ Պետրոսի գերեզմանին:

Վատիկանի գրադարանում նա հայտնաբերում է թվով 10 հայկական ձեռագրեր, հետո քննում է դրանց արժեքավորության հարցը: Այնտեղ տեսնում է նաև տիեզերահռչակ Միքելանջելո Բուոնարոտտիի Մովսեսի արձանը: Իտալական Վերածննդի խոշորագույն վարպետներից մեկը՝ Միքելանջելոն (1475-1564), հիմք ընդունելով Աստվածաշունչը, քանդակել էր Մովսես մարգարեին: Արձանը ստեղծվել էր 1515-1516 թթ. և դրվել էր Հռոմի Հուլիոս Երկրորդ պապի տապանաքարի վրա: Եթե Միքելանջելոյի ստեղծած «Դավիթը պայքարում էր միայն արտաքին թշնամու՝ հզոր Գողիաթի դեմ, ապա Մովսեսը իր սեփական ժողովրդին տեսնում էր խոնարհված «ոսկե հորթին»: Աստվածաշնչի համաձայն, Մովսեսը ուժեղ կամքի տեր, «տիտանական անձնավորություն էր»: Ղևոնդ Ալիշանը չի հավանում այս արձանը, քանի որ միանգամայն ուրիշ պատկերացում ուներ մարգարեի մասին: Մովսեսը, համաձայն Աստվածաշնչի, իջնում է Մինայի լեռներից. դա այստեղ պատկերված չէր: Ղևոնդ Ալիշանը գտնում է, որ Միքելանջելոն Մովսեսի արձանի գլուխը շատ փոքր է քանդակել, «մօրուքը շատ հերձուտեալ և ջրանման է, լուսեղեն եղջիրները շատ եղջերանման են» (էջ 25):

Հռոմում շարունակելով իր ճամփորդությունը՝ Ալիշանը տեսնում է Տիտոսի (Լիվիոսի) կառուցած բաղնիքները և «մայրասպան» Ներոն կայսեր (54-68) պալատը, որտեղ «նուրբ նկարներուն վրայ կը գմայլի»: Այնուհետև բարձրանում է Ս. Պետրոս մայր եկեղեցու ոսկեգոծ գմբեթը, մտնում նրա խնձորակի մեջ և այնտեղից դիտում է բացվող տեսարանը: Ս. Պետրոսի մատենադարանում ծանոթանում է Հովհան Ոսկեբերանի պատկերի հետ, որի գլխի վրա երևում է Մեսրոպյան այբուբենով գրված «Հայր մեր որ յերկինս» գրությունը (էջ 26):

¹ Lord Byron, Childe Harold's Pilgrimage, Իտալիա, Չորրորդ երգի «Պանդխտություն չառնալից պատի», թարգմ. Ղ. Ալիշանի, Վենետիկ, 1860, էջ 9:

² Կենսագրություն Հ. Ալիշանի, գրեց Հայր Սիմեոն Երեմ[եան] (այսուհետև «Կենսագրությունից» արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից), Վենետիկ, Ս. Ղազար, 1902, էջ 24:

Գիտական բանավեճի մեջ մտնելով Լիբանանի հարց գործակալի հետ, որը միանգամայն սխալ ձևով սուրբ Ներսես Լամբրոնացուն համարում է հերետիկոս և ո՛չ թե սուրբ, Ալիշանը գրում է. «Եթե Լամբրոնացին սուրբ չէ, այն ատեն ո՞վ պիտի կրնայ արքայություն մտնել, մի միայն վարքը շոշափելի վկայ է իւր սրբութեան» (էջ 26): Նա հերքում է սուրբ Ներսես Լամբրոնացու մասին եղած թյուր կարծիքը և սխալ ընկալումը:

Ալիշանը այնուհետև ուղևորվում է Հռոմի սուրբ Սեբաստիանոսի գետնադամբարանները, այցելում է, զորավար Կրասոսի (բայց ո՛չ այն հայտնի զորավարին, որը պարտվեց Խառանի ճակատամարտում, պարթևներից՝ Սուրեն զորավարի կողմից) կնոջ՝ Մետիլլայի շիրմին: Շարունակելով ճանապարհը Ապիյան երթուղով՝ նա կանգ է առնում մի փոքրիկ եկեղեցու մոտ, որի անվանումն էր՝ *Յո՞ւ երթաս Տէր*: Այստեղ էր այն սև քարը, որտեղ առաջին անգամ ոտք էր դրել Հիսուսը³: Աշխատելով Վատիկանի մատենադարանում՝ հայագետը հայտնաբերում է 13 հայկական «ընտիր գրչագիրներ»: Այնտեղից ուղևորվում է տիեզերահռչակ Օգոստոս կայսեր (մ.թ.ա. 30 - մ.թ. 14) պալատը: Մեկ ամսվա ընթացքում ծանոթանում է Հռոմի պատմական բոլոր հուշարձաններին:

1850 թ. հոկտեմբերի 15-ին Ղևոնդ Ալիշանը վերադառնում է Վենետիկ և շարունակում է վարժարանում աշխատել: Հայագիտական նյութեր հավաքելու նպատակով նա 1851 թ. հոկտեմբերի 8-ին դարձյալ Իտալիայում էր. Մանտուայում նոր տվյալներ է հավաքում սուրբ Մեմեովն Հայկազնի մասին (էջ 34): Մատենադարանի լատիներեն ձեռագրերի մեջ գտնում է «Արմաքանոսի՝ հայոց մոլորութեանց վրայ ճառած ձեռագիր մատենան» (էջ 34): Մանտուայից 12 մղոն հեռու, Ս. Բենեդիկտոս ավանում կառուցված Ս. Բենեդիկտոսի և ս. Սիմեովն Հայկազնի տաճարում դիտում է հայ սրբի խորանը, որը նրա վրա մեծ տպավորություն է թողնում: Այդ մասին գրում է մի չափածո երկտող.

Սիմեովնի Միանձին Երկնաւորն Պաշտպանի

Արագահասի Զովոդք իւր (էջ 35):

«Հայ սուրբի հրաշագործ նշխարն առնելով, կը փութայ Մանթուա...» (էջ 36): Թվում է, թե Ղ. Ալիշանը որոշակի նմանություններ է տեսել Սիմեովն Հայկազնի և իր միանձնության միջև: Եվ պատահական չէ, որ սկսում է տեղեկություններ քաղել նրա մասին: Ի վերջո, սրբին Նվիրված մի պատառիկ է հայտնաբերում մատենադարանում: Եվ գրում է «Ս. Սիմեովն ճգնաւոր և սարկավագ Հայկազն» խորագրով հոդվածը, որը տպագրվում է «Բազմավեպ» հանդեսում⁴: Նյութի տողատակում նշված է, որ հիշյալ հոդվածը Ալիշանը գրել է 1851 թ.

³ «Ըստ աւանդութեան՝ կը համարուի թէ Պետրոս առաքեալ երբ քրիստոնէից յորդորով Ներոնի ձեռքէն ազատելու համար Հռովմէն կը հեռանար, զՔրիստոս կը տեսնէ որ խաչը ուսը առած դէպի Հռովմ կ'երթայ: Առաքեալը կը հարցնէ. «Յո՞ւ երթաս Տէր – Quo vadis Domine». Յիսուս կը պատասխանէ Նորէն խաչուելու կ'երթամ: Այն ատեն Սուրբ Առաքեալը կը հասկնայ որ Տիրոջ կամքն էր նահատակութենէ խոյս չի տալ: Որով Հռովմ կը մտնէ ու կը խաչուի: Տեսիլքի տեղը կը շինուի մատուռ մը նոյն յիշյալ վերտառութեամբ» (նոյն տեղում, էջ 29):

⁴ Տե՛ս Բազմավեպ, 1884, յունուար-փետրուար-մարտ, էջ 7:

ճանապարհորդության ժամանակ, դեպի Մանտուա ուղևորվելիս. այն առաջին անգամ ընթերցվել է Վենետիկի Ակադեմիական ժողովում:

Ո՞վ էր սուրբ Սիմեոն ճգնավորը՝ սարկավագ Հայկազնը, որով հետաքրքրվում էր Ալիշանը: Նախ, նա պարզում է Սիմեոնի հայկական ծագումը: Լատինատառ արձանագրության մեջ հայտնաբերում է Սիմեոն միանձնի անունը, որով շատ է ոգևորվում: «Եւ է Սիմեոնդ այդ միանձն և անապատաւոր, և ազգաւ հայ»⁵: Հենվելով իր իսկ հայտնաբերած աղբյուրագիտական նյութերի վրա, որոնց մեծ մասը լատիներենով էր գրված, նա հիշատակում է սրբի կատարած մեծ առաքելությունը: Սիմեոն Հայկազնի ծննդյան ճիշտ թվականը Ալիշանին հայտնի չի եղել: Նրա կարծիքով, սուրբ Սիմեոնը ծնվել է Եփրատի ափին գտնվող Արշամաշատ քաղաքում: Հոր անունը Եկտոր էր, մորը՝ Երանյակ (էջ 6): Սիմեոնի ծնողները մտադրվել էին իրենց տղային ամուսնացնել Աստղիկ անունով կույսի հետ: Հայրը նաև ցանկանում էր որդուն տալ զինվորական ծառայության, բայց Սիմեոնը հրաժարվեց աշխարհիկ կյանքից՝ ընտրելով ճգնակյացությունը: Սիմեոնը սովորեց Եփրատի գետեզերյա մի եկեղեցում: Այնտեղ նա հասնում է սարկավագի աստիճանի: Այնուհետև, գնում է Պաղեստին, այնտեղից էլ տարբեր երկրներ՝ Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Գալիցիա, Մեծ Բրիտանիա և այլուր, ուր զբաղվում էր քարոզչությամբ: Սուրբը մահացավ՝ հասնելով խոր ծերության՝ 1016 թ. հուլիսի 26-ին և թաղվեց Մանտուայի Սուրբ Բենեդիկտոսի և Սուրբ Սիմեոնի եկեղեցում:

Սրբի խորանի արձանագրությունը ընթերցելով՝ Ղևոնդ Ալիշանը նկարագրում է նաև սրբի հայկական պատկերն ու տարազը. «...և ո՞րպես յանկարծոյն ի հաճոյական յապուշ կտրեալ կառչէի, անդէն և անդ տեսանելով ճշգրիտ հայեցի կերպարանս յանդրի հողայթործ ի պատկեր սրբոյն կանգնեալ յաջմէ սեղանոյն, արտաքոյ մատրանն, այր ճգնաւոր, կարճ հասակաւ, մեծագլուխ և լայնաճակատ, բոլորադէմ, զուարթերես, հերձամօրուս, զգեցեալ պարեգոտ և վերարկու, և վեղար հայկական զկէս գլխոյն ծածկելով, աջովն հանգրիճանելով զվերարկուն, և ի վերայ բազկին՝ մատեան աղօթիցն, իսկ ձախուն գրկելով զեղջերուն կանգուն»⁶:

Ասենք, որ ամեն տարի, հուլիսի 26-ին Մանտուայում նշվում է հայ սրբի հիշատակի օրը:

Այս ճամփորդությունների ընթացքում Ղևոնդ Ալիշանը, հանդիպում է մի շարք եվրոպացի հայագետների հետ, քննարկում տարբեր նյութեր և հայագիտական ճշգրտումներ կատարում: Գերմանացի հայագետ Վինդիշմանին նվիրում է իր «Նուագները»:

1850 թ. վերջին Ալիշանը կրկին վերադառնում է Վենետիկ: 1851 թ. դեկտեմբերի 5-ին Մխիթարյան միաբանության վարչական ժողովը որոշում է Ղևոնդ Ալիշանին գործուղել Լոնդոն՝ միաբանության հետ կապված կարևոր գործով: Ուղևորությունը սկսվում է 1852 թ. հունվարի 18-ին: Ղևոնդ Ալիշանը Լոնդոնում, փաստաբան Պ. Լուիզի աջակցությամբ, հնարավորություն է ստանում ստուգելու, իսկ հետո վարժարանի բարերարի՝ Ռաֆայելի կտակում

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 11:

հայտնաբերելու 125000 ֆրանկ գումար հոգուտ միաբանության: Դա մեծ օգնություն էր Ռափայելյան վարժարանի շենքը գնելու և պահպանելու համար: Նա ուղևորության ընթացքում այցելում է Վիեննա (1852 թ.), հանդիպում տեղի մատենադարանի դիվանապետ կոմս Այխենֆելդի հետ, որը նրան աջակցում է մատենադարանում հայտնաբերելու հաճընցի Սարգսի Աստվածաշունչը: Վիեննայի Մխիթարյան վանքում, որի թանգարանը շատ ճոխ էր, հայագետ Հ. Միպիլյանի հետ մանրամասն քննարկում է դրամագիտական, մասնավորապես Ռուբինյան դրամների հարցերը: Սակայն Ղևոնդ Ալիշանը երկար չի մնում այնտեղ, երկու օրից ուղևորվում է Բեռլին, որտեղ գերմանացի հայագետ Հ. Պետերմանի հետ քննարկում Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»: Տեղի մատենադարանում հայտնաբերում է 10 հայ գրչագիրներ, թանգարանում՝ Տիգրան Մեծի արծաթե 1 դրամ, 2 դրամ էլ՝ Միհրդատ VI-ի, Ռուբինյաններին պատկանող թվով 45 դրամներ, որոնց մեջ կային պղնձե այլ դրամներ: Այստեղ Մ. Խորենացու «Հայոց պատմության» Ա գիրքը համեմատում է լայացիգյան օրինակի հետ:

Ղևոնդ Ալիշանը գիտական այս պրպտումներից հետո ուղևորվում է Լոնդոն, Քեմբրիջում նրան հաջողվում է գտնել մի քանի հայկական ձեռագրեր: Բարիամ Բարք դոյակի ձեռագրերի մեջ հայտնաբերում է գիտական հետաքրքրություն ներկայացնող տասը հայ գրչագիրներ: Կիրտոն գյուղի վարժարանի ձեռագրերը պրպտելիս արաբական բաժնում գտնում է անթվակիր մի հայերեն Սաղմոս: Օքսֆորդի համալսարանում հայտնաբերում է 18 հայ գրչագիրներ, իսկ Բողլեյան գրադարանում ընդօրինակում է նոր ձեռագրեր:

1852 թ. օգոստոսի 5-ին, երբ Ղևոնդ Ալիշանը Լոնդոնում ավարտել էր Ռափայելյան վարժարանի կտակի հետ կապված ֆինանսական գործերը, շտապում է Փարիզ, այցելում է Ս. Դիոնիսոսի տաճարը, որտեղ գտնվում էր կլիլկյան վերջին հայ թագավորի՝ Լևոն VI-ի տապանաքարը:

Լուվրում տեսնում է ձեռքին բիր բռնած Տրդատ թագավորի հսկա արձանը, որը սխալմամբ տեղադրված էր պարթևական բաժնում:

Կանտոն էր (Բելգիա) գտնվում մեկ ուրիշ հայկազունի՝ Ս. Մակարի տաճարը, որտեղ այցելելով, 1852 թ. սեպտեմբերի 26-ին, տեսնում է սուրբ Մակար եպիսկոպոսի «կիսակործան գերեզմանը» և որտեղից, իբրև մասունք, վերցնում է շաղախի մի քանի կտորներ: Ապա ուղևորվում է Բրյուսել, որտեղ, ինչպես նրան տեղեկացրել էին, «օտարահոշակ սուրբ Խրիստյիոս անուամբ Հայկազն սուրբին գլուխը քաղքին մայր եկեղեցույ մեջ կը պահուի»: Սակայն ջանքերը իզուր են անցնում, քանի որ եկեղեցու դուռը կնքված է լինում և Ալիշանին հնարավորություն չի տրվում ծանոթանալու հայազգի սրբին վերաբերող նյութերին:

Բրյուսելից գնում է Ոստենդ, որտեղ գրում է «Հյուսիսային ծովը» գողտրիկ բանաստեղծությունը:

Մինչև Փարիզ հասնելը անցնում է պատմական Վաթեռլոոյի դաշ- տով, ուր Նապոլեոնը մարտնչել էր անգլիացի Վելլինգտոնի «լեգեոնի» դեմ:

Փարիզի վարժարանում զբաղվում է հնագիտությամբ, մատենադարանում գտնում է Աբգարի թուղթը, որը հիշեցնում է Ղերոբնայի պատմությունը: Հայագետ- դիվանապետ Ռենոյի հետ (ծանոթացրել էր Գաբրիել Այվազովսկին) երկար ժամանակ քննարկում է հայոց հին ճաշոցի հարցը: 1852 թ. հոկտեմբերի 17-ին

Ղևոնդ Ալիշանը Վենետիկից գրություն է ստանում, որտեղ նշված էր, որ նրան հետ են կանչում:

1852 թ. հոկտեմբերի 22-ին Փարիզից Շվեյցարիայով ուղևորվում է Իտալիա: Նրան արգելում են Իտալիա մտնել, քանի որ չունեն անձնագիր, և ձեռքին էր գտնվում «Ողբամ զքեզ Հայաստան» նկարը:

XIX դ. երկրորդ կեսին հայ իրականության մեջ այդ նկարը (հեղինակը, հավանաբար, Ճանիկ Արամյանն է) լայն ժողովրդականություն էր վայելում: Ավերակների վրա նստած լացող մի կին (Մայր Հայաստանի խորհրդանիշը) ուրվագծվում էր Մասիսի հեռավատների հենքին: Նկարի պատճառով իտալացի սահմանապահները նրան հեղափոխականի տեղ են դնում: Ստիպված վերադառնում է Շվեյցարիա:

Ժնևի մաստենադարանում (1853 թ. 12 հունվարի) ընդօրինակում է Ավետիք պատրիարքի մի քանի հիշատակարանները:

Այնտեղից մեծ դժվարությամբ վերադառնում է Սուրբ Ղազար կղզին և մինչև կյանքի վերջը նվիրվում է գիտությանը:

Հոռմում եղած ժամանակ Ալիշանը հանդիպում է Պիոս Թ պապին: Վերջինս, գրուցելով Վատիկանում Ղևոնդ Ալիշանի հետ, նրա անունը արտասանեց լատիներեն ձևով՝ Լեոն: Ղ. Ալիշանը, չնայած ազգային-պահպանողական ուղղության գործիչ էր, սակայն գտնում էր, որ հայրենիքի ազատագրման միակ ուղին թուրք-պարսկական բռնակալության դեմ զենքը ձեռքին պայքարելն է: Նա իտալական ազգային-ազատագրական շարժմանը սկսել է առնչվել վաղուց, Վենետիկի Ռափայելյան վարժարանի տեսուչ նշանակվելու օրերից:

1848-1849 թթ. սկսվել էին իտալական ազգային-ազատագրական շարժումները՝ ուղղված ավստրիական լծի դեմ: Ավստրիայի կողմից Իտալիան բաժանվել էր 8 մասի: Իտալացի ժողովուրդը պայքարում էր ազատագրելու իր երկիրը օտարի հաստատած բիրտ կարգերից: Ավստրիայի կանցլեր կոմս Մետերնիխը 1815 թ. Վիեննայի համաժողովում հայտարարում էր, որ Իտալիան սոսկ աշխարհագրական հասկացողություն է. դա երկիր չէ, քանի որ չունի իր աշխարհագրական սահմանները և կոնկրետ ազգային նկարագիր⁷:

Պայքարի մեջ էին նաև Վենետիկի հանրապետության հոծ զանգվածները՝ փաստաբան Դանիել Մանինի գլխավորությամբ: Իտալացի հայրենասերները 1848 թ. մարտի 18-22-ը արյունահեղ մարտեր էի մղում Վենետիկի փողոցներում՝ պայքարելով հանուն երկրի ազատության և անկախության:

Սակայն պայքարի դասերը իզուր չանցան, և հետագայում (1859-1860-ական թթ.) իտալացիները իրենց առաջնորդների՝ կոմս Կավուրի, Վիկտոր-Էմմանուել Երկրորդ թագավորի, ազգային հերոսներ Ջուզեպե Մաձձինիի և Ջուզեպե Գարիբալդիի գլխավորությամբ մաս առ մաս ազատագրեցին Իտալիան՝ թոթափելով ավստրիական բռնապետական լուծը, երկիրը միավորելով մեկ միասնական պետության մեջ: Այդ ժամանակաշրջանը Իտալիայի պատմության մեջ կոչվեց Ռիսորջիմենտոյի (Վերածնության - Ղ. Ա.) ժամանակաշրջան:

⁷ Новая история, т. II, 1789-1870, под ред. И. С. Галкина, М., 1958, с. 285.

Իտալական ազգային-ազատագրական շարժման օրերին Ղ.Ալիշանը գրում էր «Մասիսու սարերն» և «Երգ ու գնացք զորացն Հայոց» («Հայրունի» շաբաթից) բանաստեղծությունները:

Ղևոնդ Ալիշանը վերջին բանաստեղծության մեջ պատմական էքսկուրս է կատարում Վարդան և Վահան Մամիկոնյանների ժամանակները (V դ.) և հաղթանակի կոչ է անում հայությանը՝ ցանկանալով հայրենասիրական ոգին վառ պահել նրա մեջ: Հայաստանի հին փառքը ջատագովելով՝ հայրենիքից հեռու՝ Վենետիկում, Ղևոնդ Ալիշանը հայերին ոգևորում է անցյալի հայրենասիրության գաղափարներով՝ բացելով նոր ուղիներ ապագայի համար: Այս իմաստով Արշակ Չոպանյանը բարձրարժեք է համարում Ղևոնդ Ալիշանի կատարածը իր ազգի համար: «Ալիշան հոյակապօրէն կատարած է այն գործը զոր ուզած է կատարել, և որ, շարունակելով Խորենացոյն և Չամչեանին գործը, իրեն գլխաւոր նպատակ ունէր հայ ժողովրդին ներշնչել կազդուրիչ ու ազնուացուցիչ հպարտութիւնը մեծ ու փառաւոր անցեալ մը ունեցած ըլլալու...»⁸:

1849 թ. «Մասիսու սարերն» և «Բա՛մ փորոտանը» բանաստեղծություններն էլ, գրված իտալական ազգային-ազատագրական շարժման ազդեցությամբ, Ղևոնդ Ալիշանին կանգնեցրին լուսավորական շարժման այնպիսի մտածողների կողքին, ինչպիսիք էին Գրիգոր Արծրունին, Մկրտիչ Փորթուգալյանը և ուրիշները, որոնք տեսնելով Բալկանյան ժողովուրդների ազատագրումը թուրքական լծից (1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով) մտածում էին, որ հայ ազգն էլ պետք է ազատագրվի միայն ապստամբելու ուղիով, և որ այլ ճանապարհ չկա:

Արդ, Ղևոնդ Ալիշանի՝ տաղանդավոր և ազգանվեր անձնավորության՝ Եվրոպայում ուղևորության այդ երեք տարիները բեղուն եղան և մեծ օգուտ բերեցին հայագիտությանը և հայ մշակույթի զարգացմանը, պատմության, հնագիտության, դրամագիտության, հայկազուն սրբերի ու ձեռագրերի հայտնաբերման բնագավառում:

ИЗ ПУТЕВЫХ ЗАМЕТОК ГЕВОНДА АЛИШАНА

АСМАРЯН Г. А.

Резюме

В 1850-1853 гг. Г. Алишан совершил несколько путешествий из Венеции (о. Св. Лазаря) по странам Европы. Из общения с европейской культурой великий ученый-арменовед почерпнул очень много ценных фактов. Он изучил материалы, сохранившиеся в армянских архивах и европейских хранилищах рукописей.

⁸ Արշակ Չոպանեան, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 88:

Г. Алишан обнаружил серебряные и медные монеты времен Тиграна Великого, Митридата 6-го Понтийского и Рубенидов. Он нашел жития армянских Святых в Мантуе (с. Симеона, с. Нерсеса, с. Ламбронати, с. Макара и др.).

В Венеции Г. Алишан общался с деятелями национально-освободительного движения Италии. Здесь им были написаны стихотворения „Горы Масисские” и „Песнь и марш армянских воинов” (1849 г.).

Являясь приверженцем идей национально-консервативного направления, Г. Алишан, воодушевленный примером балканских народов (в частности болгар, обретших независимость в результате русско-турецкой войны 1877-1878 гг.), склоняется к мысли, что и армяне смогут освободиться от турецкой тирании лишь путем восстания.